ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴԿ-24/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
5	«Անբասիր ծառայության համար» մեդալն իրենից ներկայացնում է 38 մմ տրամագծով երկկողմ պատկերով շրջան՝ վրադիր էլեմենտներով: Պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից: Մեդալը երկու կողմից եզրագծված է 1մմ լայնությամբ և 1 մմ բարձրությամբ շրջանակով: Մեդալի դիմային երեսը եզրազարդված է ռելիեֆային պսակով, որի ձախ թևը դափնե ճյուղ է, իսկ աջը՝ կաղնու ճյուղ: Մեդալի կենտրոնում վրադիր էլեմենտի ձևով տեղակայված է Կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը՝ 30 մմ տրամագծով, որի եռագույն շրջանը պատված է գունավոր էմալով (կարմիր, կապույտ, նարնջագույն): «Անբասիր ծառայության համար» երկրորդ աստիճանի մեդալն ոսկեպատված է 999 հարգի ոսկով, հիմնական գույնը ոսկեգույնն է: Մեդալի դարձերեսին առկա է «II ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» հորիզոնական քառատող ռելիեֆային գրառումը, որի ներքևում տեղակայված է մեդալի հերթական համարը: Մեդալն ունի հնգանիստ կախիչ՝ 39x27x39x24x24 չափերի, որը երեսպատված է 24 մմ լայնություն ունեցող մետաքսե մուգ կապույտ ժապավենով: Ժապավենի կենտրոնով միմյանց զուգահեռ և 2 մմ հեռավորության վրա անցնում են 2 մմ լայնությամբ ոսկեգույն 2 զոլակներ, իսկ ժապավենի կողքերը եզերված են 2 մմ լայնությամբ մոխրագույն զոլակներով: Ապրանքի նմուշը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴԿ-24/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
5	